ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համանման բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/17, 16.03.2021թ.

Բողոք բերող անձ՝ «ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» գնանշման հարցում

Գնման առարկան՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝

1. դադարեցնել թիվ «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 1-ին թիվ 21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով կայացված որոշումը,
2. դադարեցնել թիվ «ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 4-ին թիվ 21/10-3 արձանագրության 2-րդ բաժնի ա/ կետով կայացված որոշումը,
3. ճանաչել «ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս» ՍՊԸ-ին, որպես նվազագույն գին առաջարկած մասնակից:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԱՆԱՆԻԿՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝
Պրն. Լևոն Օհանյանին
Բողոքարկվող գնանշման հարցման ընթացակարգի ծածկագիր՝
թիվ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10

Բողոք բերող անձ՝ <<ԷՖ ԷՍ ՓԻ Ըդվայս>> ՍՊԸ
ՀՎՀՀ 02835031
պետ. գրանց. համար 273.110.1155592
գրանցման ամսաթիվ 2020-12-16
էլ.հասցե info@fsp.am

Ծանուցման հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Երվանդ Քոչար 9, բն 57
Հեռ. +374 95 707 515

Տնօրեն՝ Ռուզաննա Բաղալյան
անձնագիր՝ AP 0485446, տրված՝ 27.07.2016թ.,
011-ի կողմից,
հասցե՝ՀՀ, ք. Երևան, Երվանդ Քոչար 9, բն 57
հեռ. 094 71 01 71

Պատվիրատու *«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» Հեռ. +374 99421212*

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ թիվ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով «Գնման առարկա է հանդիսանում «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամի կարիքների համար՝ աուդիտորական ծառայությունների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որոնք խմբավորված են «1» չափաբաժնում:

ԲՈՂՈՔ

«Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 3-ի թիվ 21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով կայացված որոշման դեմ) և գնահատող հանձնաժողովի 2021թ. Մարտի 4-ի թիվ 21/10-3 արձանագրության 2-րդ բաժի ա/ կետի որոշման դեմ:

1. **Բողոքի փաստական հիմքերը**

1. «Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:
2. Նշված գնանշման հարցմանը մասնակցության հայտ են ներկայացրել

   ա/ «Էյ Էմ Էիչ աուդիտ» ՓԲԸ-ն

   բ/ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն

   գ/ «Բի Դի Օ Արմենիա» ՓԲԸ-ն

   դ/ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՓԲԸ-ն

   է/ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն
3. 2021թ. Մարտի 1-ին գնահատող հանձնաժողովը հրապարակել է թիվ 21/10-2 արձանագրությունը, որի 5-րդ բաժնի 1-ին կետով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊ ընկերության հայտը էլ. ստորագրության բացակայության պատճառով ճանաչվել է հրավերի պայմաններին անհամապատասխան և հայտը մերժվել է
2. **Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**
   1. «Գնահատող հանձնաժողովի կողմից 2021թ. մարտի 1-ին թիվ 21/10-2 արձանագրությամբ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊ ընկերության հայտը էլ. ստորագրության բացակայության պատճառով ճանաչվել է հրավերի պայմաններին անհամապատասխան և հայտը մերժվել է:
   2. Գնահատող հանձնաժողովի կողմից 2021թ. մարտի 1-ին թիվ 21/10-2 արձանագրությամբ «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊ ընկերության զրկվել է բանակցություններին մասնակցելու իրավունքից

3. **Բողոքի իրավական հիմքերը.**

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝ *Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի .... և որոշումները:*

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի՝ *Յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն՝*

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու ... գնահատող հանձնաժողովի գործողությունները ... որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող անձին.

Հիմք ընդունելով վերը նշված նորմերը, ներկայացնում եմ սույն բողոքը, քանի որ գտնում եմ Գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 1-ի թիվ

21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով, անօրինական որոշմամբ, ոտնահարվել է «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊ ընկերության իրավունքները:

Այսպես՝

1. Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 11-րդ ենթակետի՝ *Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով.*

2. Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի *<<.. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: >>*:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ պատվիրատուն իր կողմից հրապարակված արձանագրությունների մեջ շատ ճիշտ է նշել այն հոդվածները, որով կարգավորվում են տվյալ իրավահարաբերությունները, *<<40. 4)հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, <u>բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի</u>: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը…>>* բայց չգիտես ինչու լրիվ այլ մեկնաբանում է տվել այդ հոդվածներին:

Ամփոփելով վերոգրյալը և հուսալով, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն անշահախնդիր և անկախ քննություն իրականացնող մարմին է, ով շահագրգռված չէ կոնկրետ գնումների գործընթացի արդյունքներով և իր պարտականությունների ու իրավունքների կատարման ժամանակ պաշտպանված է արտաքին ազդեցություններից, ինչպես նաև ևս

մեկ անգամ պնդելով բողոքում նշված իրավական և փաստական հիմնավորումները,

խնդրում եմ

1. դադարեցնել թիվ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 1-ին թիվ 21/10-2 արձանագրության 5-րդ բաժնի 1-ին կետով կայացված որոշումը:

2. դադարեցնել թիվ ԱԱԳԼ-ԳՀԾՁԲ-21/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ. մարտի 4-ին թիվ 21/10-3 արձանագրության 2-րդ բաժի ա/ կետով կայացված որոշումը:
3. Ճանաչել «Էֆ Էս Փի Ըդվայս» ՍՊ ընկերությանը, որպես նվազագույն գին առաջարկած մասնակից:

Կից ներկայացնում եմ՝

1. Պետական տուրքի անդորրագիրը.
2. 2021թ. մարտի 1-ին թիվ 21/10-2 արձանագրության պատճենը.
3. 2021թ. մարտի 4-ին թիվ 21/10-3 արձանագրության պատճենը.
4. Պետ. ռեգիստրի պատճենը
5. Էլ. Փոստով կողմին ուղարկելու հավաստագիր

<<Էֆ Էս Փի Ըդվայս>> ՍՊԸ
Ռուզաննա Բաղալյան